373
Հ-99

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի
1914

373
Հ-99
Ղ
370
Զ164-ՀՐ
1004
15447
! - MAR 2010

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI. 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ
Տպարան Մայր Աթոռոյ ս. Էջմիածնի
1914 թ.

17 JUN 2013

51.630

Հաստատեմք զայս հրահանգ Հոգեւոր Թեմական Դպրանոցաց Հայոց եւ տամք ի ժամանակաւոր գործադրութիւն.

ԳԷՈՐԳ Ե.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

11 հոկտեմբերի 1914 թ.
Ս. Էջմիածին

ՀՐԱՀԱՆԳ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԱԶԳԱՅԻՆ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐԱՆՈՑՆԵՐԻ.

Ա. ԳԼՈՒԽ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՆՈՆՆԵՐ.

1. Հայոց Հոգեւոր Ազգային Թեմական Դպրանոցների նպատակն է հանրակրթական պատրաստութեամբ ուսուցիչներ և հոգեւորականներ տալ։

2. Թեմական Դպրանոցը գտնւում է Ամենայն Հայոց Կաթուղիկոսի գլխաւոր իշխանութեան ներքոյ։

3. Թեմական Առաջնորդը լինելով դպրանոցի մերձաւոր իշխանաւորը՝ հսկում է դպրանոցի կանոնների ճիշտ կատարման վրայ։

4. Թեմական Առաջնորդը Դպրանոցում անկանոնութիւն նկատած դէպքում հրաւիրում է հոգաբարձութեան ուշադրութիւնը։

5. Իւրաքանչիւր Թեմական Դպրանոց ունի Թեմական Առաջնորդի նախագահութեամբ և վերատեսչի անդամակցութեամբ 12 հոգուց բաղկացած Հոգաբարձութիւն, որը ընտրւում է համաձայն Կովկասի Տ. Փոխարքայի տուած ժամանակաւոր կանոնների (1905 թ.) և տնօրինում է Դպրանոցի տնտեսական մասը, հրաւիրում և արձակում է դպրանոցի բոլոր պաշտօնեաներին և ունի ընդհանուր հսկողութիւն դպրոցական բոլոր գործերի վրայ՝ համաձայն այս հրահանգի։

Ծանօթ. Նոր-Նախիջևանի Թեմական Դպրանոցի Հոգաբարձութիւնն ընտրւում է համաձայն Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան։

6. Թեմական Դպրանոցներն ունեն եօթնամեայ դասընթաց.

Ծանօթ. Ա. Թեմական Դպրանոցի առաջին դասարան մտնել կարող են եկ.-ծխական չորսամեայ դպրոցի լիակատար դասընթացի պատրաստութիւն ունեցողները։

Բ. Թեմական դպրանոցները կարող են պահել ծխական չորսամեայ դպրոցի բոլոր բաժանմունքները կամ այդ բաժանմունքներից մէկն ու մէկը, սակայն անպայման յաջորդաբար։

7. Վեհափառ Կաթուղիկոսի կարգադրութեամբ Թեմական Դպրանոցի ուսումնական և տնտեսական

մասերն ենթարկւում են վերահսկողութեան (կոնտրոլի) դէթ տարին մի անգամ։

8. Դպրանոցներում առարկաներն աւանդւում են հայոց լեզուով, իսկ Ռուսաց լեզուն ու Ռուսաց գրականութիւնը, Ռուսաց պատմութիւնն ու Ռուսաստանի աշխարհագրութիւնն աւանդւում են ռուսաց լեզուով։

9. Թեմական դպրանոցների արդիւնքներն են.

1. Սեպհական կալուածներից և դրամագլուխներից ստացուած եկամուտը.
2. Թեմի եկեղեցիների եկամուտներից որոշ տոկոս կամ գումար.
3. Վանական կալուածներից նպաստ Վեհափառ Կաթուղիկոսի որոշմամբ.
4. Թեմական եկամուտներից՝ ըստ հաստատութեան Ս. Էջմիածնի Սինոդի՝
   Ա. Թեմի մոմավաճառութիւնից,
   Բ. ծննդեան վկայականներից,
   Գ. պսակադրամից,
   Դ. սրբադրամից,
5. Թոշակադրամ, և
6. Կամաւոր նուէրներ։

10. Դպրանոցի լիակատար դասընթացն աւարտած անձերն իրաւունք ունին լինել հոգևորական, եկեղեցական-ծխական դպրոցների ուսուցիչ, նմանապէս աւանդել հայոց լեզուի և կրօնի դասեր Պետական դպրոցներում։

11. Դպրանոցների լիակատար դասընթացն ա-

ւարտած անձերը վայելում են զինուորագրական արտօնութիւններ, համաձայն օրէնքի։

12. Իւրաքանչիւր դպրանոց ունի կնիք՝ արքունական արծուէնշանի ձևակերպութեամբ և այս մակագրով. «..... Հայոց Հոգևոր Ազգային Թեմական Դպրանոց»։

13. Թեմական դպրանոցները կարող են ունենալ երթևեկ և դիշերօթիկ աշակերտներ, որոնք լինում են ձրիավարժ կամ թոշակառու։

Ծանօթ. Ա. Իւրաքանչիւր աշակերտի վճարելիք թոշակի քանակը որոշում է հոգաբարձութիւնը։

Բ. Հայոց դպրոցների դասատուների զաւակներն ազատ են թոշակից։

Գ. Ձրիավարժներից չքաւորներին, դպրանոցի միջոցները ներած դէպքում, տրւում են նպաստներ։

14. Թեմական դպրանոցները կարող են պահել զուգընթաց դասարաններ։ Իւրաքանչիւր դասարանում աշակերտների թիւը ցանկալի է սահմանափակել 40-ով։

15. Դպրանոցներում ուսումը տևում է ուսումնական տարուայ ընթացքում ամեն օր, բացի կիւրակէ և տօն օրերից, որոնց ցուցակը հաստատում է Վեհափառ Կաթուղիկոսը։

16. Արձակուրդները և նրանց տևողութիւններն են. Ծննդեան արձակուրդը՝ դեկտեմբերի 24-ից մինչև յունվարի 8-ը, Բարեկենդանի՝ չորեքշաբթի օրուանից մինչև մեծ պասի երկուշաբթի օրը, Զատկական արձակուրդը՝ երկու շաբաթ և ամարային արձակուրդը՝ յունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 1-ը։

Ծանօթ. Ա. Մանկավարժական խորհրդի զբաղմունքները տևում են ամենաուշը մինչև յունիսի 5-ը։

Բ. Վերաքննութիւններն և ընդունելութեան քննութիւնները սկսւում են օգոստոսի 25-ից։

17. Աւարտական դասարանում բոլոր առարկաներից և միւս դասարաններում աւարտական առարկաներից լինում են վերջին տարուայ դասընթացից կիսամեայ ստուգումներ՝ դեկտեմբեր և մայիս ամիսների վերջերին։

Ծանօթ. Ա. Հայոց լեզուից, ռուսաց լեզուից և մաթեմատիկայից լինում են բոլոր դասարաններում ստուգումներ։

Բ. Վերատեսուչը կամ մանկավարժական ժողովը տարուայ ընթացքում կարող են նշանակել ստուգումներ նաև միւս առարկաներից։

18. Ստուգումները կատարում են վերատեսուչը կամ տեսուչը, դասատուն և մի կամ երկու ընթերակայ։

19. Կիսամեայ ստուգումների ժամանակ նշանակւում են միջին թուանշաններ, հանելով վերատեսչի կամ տեսչի, դասատուի և ընթերակաների նշանակուած թուանշաններից։

20. Աշակերտների յառաջադիմութիւնը ցոյց տալու համար գործադրւում են հետևեալ թուանշանները. 5.—յոյժ գովելի, 4.—գովելի, 3.—բաւարար, 2.—թոյլ, 1.—վատ։

21. Է-րդ դասարան աւարտող աշակերտները, համաձայն Մանկավարժական ժողովի որոշման, ստանում են աւարտման վկայական որոշած ձևով։

22. Ընթացաւարտ աշակերտների վկայականները տրւում են Հոգաբարձութեան և Մանկավարժական ժողովի Նախագահների և Մանկավարժական ժողովի քարտուղարի ստորագրութեամբ։

Բ. ԳԼՈՒԽ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ ԵՒ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

23. Հոգաբարձական Խորհրդի նախագահն է Թեմական Առաջնորդը, իսկ Առաջնորդի բացակայութեան դէպքում նախագահում է խորհրդի հերթապահ հոգաբարձուն։

Ծանօթ. Նոր Նախիջևանի թեմական դպրանոցի հոգաբարձական խորհրդին նախագահում է Նոր-Նախիջևանի Փոխանորդը, Առաջնորդի Քիշնևում լինելու պատճառով։

24. Թեմական Առաջնորդի պաշտօնը թափուր եղած դէպքում հոգաբարձական խորհրդի նիստերին նախագահում է թեմի կառավարիչը կամ կառավարչի չեղած դէպքում՝ Վեհափառ Կաթուղիկոսի կոնդակով նշանակուած Կոնսիստորիայի նախանդամ վարդապետը։

25. Հոգաբարձուների ընտրութիւնը կատարւում է համաձայն Կովկասի Տ. Փոխարքայի տուած 1905 թուի ժամանակաւոր Կանոնների՝ Կովկասեան շրջանի համար (տես ժամ. Կանոն. յօդ. 5).

Ծանօթ. Ա. Փոխանդամների ընտրութիւնը լինում է նոյն եղանակով։

Բ. Ժամանակամիջոցը լրացրած հոգաբարձուները կարող են վերընտրուել։

26. Եթէ հոգաբարձուներից մէկնումէկը այս կամ այն պատճառով անկարող է այլևս շարունակել իւր պաշտօնը, նրան փոխարինում է փոխանդամը՝ ընտրուած ըստ քուէի առաւելութեան։

27. Հոգաբարձութիւնն ընտրում է վերատեսուչ, կանխաւ հարցնելով մանկավարժական խորհրդի կարծիքը թեկնածուների մասին, և առաջարկում է ի հաստատութիւն Վեհափառ Կաթուղիկոսի։

28. Հոգաբարձութիւնն ընտրում է տեսուչ, առաջարկութեամբ վերատեսչի, որը նախապէս հարցնում է մանկավարժան ժողովի կարծիքը իւր առաջարկելիք թեկնածուների մասին։

29. Վերատեսչի առաջարկութեամբ հոգաբարձութիւնն ընտրում և հաստատում է ուսուցիչներին, վերակացուներին, մատենադարանապետին, բժշկին և վերատեսչի քարտուղարին. կրօնուսոյցներին հաստատում է Թեմական Առաջնորդը։

30. Տեսուչը, ուսուցիչները, վերակացուները, մատենադարանապետը, բժիշկը և վերատեսչի քարտուղարն արձակւում են վերատեսչի պատճառաբանուած առաջարկութեամբ և հոգաբարձութեան որոշմամբ՝ նախապէս լսելով արձակուողների բացատրութիւնը։

31. Վերատեսուչն արձակւում է հոգաբարձութեան պատճառաբանուած որոշմամբ և Վեհափառ Կաթուղիկոսի հաստատութեամբ։

32. Հոգաբարձութիւնը Ա.) ընտրում է իւր միջից կամ դրսի վստահելի անձերից իւր պատասխանատուութեամբ գանձապահ։

Բ. Ընտրում և հաստատում է դպրանոցի գործավարին և տնտեսական կառավարչին.

Գ. Քննում և որոշում է դպրանոցի պաշտօնեաներին տրուող ռոճկի, նպաստների խնդիրը և նրանց աշխատանքի վարձատրութիւնը.

Դ. Կառավարում է դպրանոցի գոյքը և կալուածները.

Ե. Ժողովում է դպրանոցի եկամուտները.

Զ. Հսկում է, որ եկամուտներն իւր ժամանակին ստացուեն և արձանագրուեն մուտքի ժապաւինեալ մատեաններում, իսկ ծախքերը կատարուեն ըստ նախահաշուի.

Է. Կազմում է դպրանոցի մուտքի և ելքի նախահաշիւը և ներկայացնում է Սինօդին ի հաստատութիւն համաձայն Տ. Փոխարքայի ժամանակաւոր կանոնների (Ժամ. Կանոն. յօդ. 6-րդ)։

Ը. Քննում է այն միջոցները, որոնցով կարելի է բարւոքել դպրանոցի տնտեսական դրութիւնը.

Թ. Ընտրում է իւր միջից տնտեսական յանձնաժողով դպրանոցի տնտեսական խնդիրը կարգաւորելու համար՝ համաձայն հոգաբարձական խորհրդի պահանջների.

Ժ. Դպրանոցի կալուածները կապալով տալու դէպքում նշանակում է աճուրդ և հաստատում պայմանագրերն օրինական եղանակով.

ԺԱ. Որոշում է ձրիավարժ աշակերտների քանակը։

ԺԲ. Մանկավարժական ժողովի ընտրութեամբ յառաջադէմ աշակերտներին ուղարկում է բարձրագոյն կրթութիւն ստանալու, որպէսզի ապագայում ուսուցչութիւն անեն.

ԺԳ. Քննում է վերատեսչի ներկայացրած կիսամեայ և միամեայ զեկուցագրերն ու տեղեկագրերը.

ԺԴ. Ստորագրեալ պաշտօնեաներին տալիս է ժապաւինեալ մատեաններ կարևորութեան դէպքում՝ գործադրելու համար.

ԺԵ. Տալիս է դպրանոցի պաշտօնեաներին արձակուրդ.

ԺԶ. Ստուգում է դպրանոցի գանձարանն ու ժապաւինեալ հաշուեմատեաններն ամեն ամսուայ և տարուայ վերջը և անակընկալ կերպով հարկ եղած դէպքում։ Ներկայացնում է Ս. Էջմիածնի Սինօդին Դպրանոցի հաշիւները համաձայն Տ. Փոխարքայի ժամանակաւոր կանոնների (Ժամ. Կանոն. յօդ. 6.) և տպագրւում է ի գիտութիւն հասարակութեան։

ԺԷ. Գնում է շահաւէտ անշարժ գոյքեր։

33. Հոգաբարձութիւնն անում է հետևեալ ծախքերը.

Ա. Դպրանոցական շէնքի, անշարժ կայքերի պահպանութեան, նոր շէնքերի և նորոգութեանց, ապահովագրութեան և այլ ծախքեր.

Բ. Զքաւոր աշակերտների օժանդակութիւն.

Գ. Բարձրագոյն կրթութեան ուղարկուած սանների թոշակներ.

Դ. Բոլոր պաշտօնատար անձերի և ծառայողների ռոճիկներ.

Ե. Մատենադարանի, ֆիզիքական կաբինետի, դիւանատան և դպրանոցի հետ կապուած այլ հաստատութիւնների պահպանութեան ծախքերը.

Զ. Վառելիք և լուսաւորութիւն.

Է. Անակնկալ ծախքեր։

34. Հոգաբարձութիւնը տալիս է դպրանոցական պաշտօնեաների տարեկան ռոճիկն ամսէ ամիս։ Եթէ մէկը պաշտօնի է մտել ամսի առաջին կիսին՝ նրան տրւում է ամբողջ ամսուայ ռոճիկը. իսկ երկրորդ կիսամսեակին պաշտօնի մտնողին տրւում է այդ ամսուայ ռոճկի կէսը միայն։

35. Հոգաբարձուները դպրանոցում ռոճկով պաշտօն չեն վարում։

36. Հոգաբարձութիւնն առնուազն երկու շաբաթը մի անգամ պէտք է նիստ ունենայ։ Իւրաքանչիւր հոգաբարձական խորհրդի ժամանակ, բացի նախագահից, պէտք է ներկայ լինին եօթն անդամ, հաշուելով նաև վերատեսչին։

Ծանօթ. Բացակայ անդամներն իրաւունք չունին պահանջելու, որ եղած կարգադրութիւնները փոփոխուեն։

37. Դպրանոցի անունով եկած բոլոր թղթերը պէտք է ստանայ հերթապահ հոգաբարձուն. իսկ դուրս ելած թղթերին ստորագրում է նախագահը կամ հերթապահ հոգաբարձուն։

38. Իւրաքանչիւր դպրանոցում պէտք է լինի հերթապահ հոգաբարձու, որն իւրաքանչիւր օր որոշ ժամանակով դպրանոց պէտք է յաճախէ։

39. Իւրաքանչիւր դպրանոցի հոգաբարձութիւնն ինքը պէտք է որոշէ հերթապահ հոգաբարձուի պարտականութիւնները։

40. Հոգաբարձուները կարող են մասնակցել մանկավարժական ժողովներին առանց ձայնի իրաւունքի։

41. Հոգաբարձական խորհրդի բոլոր հարցերն ու վճիռները պէտք է արձանագրուեն և ստորագրուեն նախագահի և ներկայ անդամների կողմից։

42. Բոլոր հարցերն ու վճիռները լուծւում են քուէարկողների ձայների կիսից աւելիով, իսկ հաւասարութեան դէպքում գերակշռում է նախագահի ձայնը։

Ծանօթ. Անդամներից մէկն ու մէկի պահանջով հարցերը պէտք է վճռուեն գաղտնի քուէարկութեամբ։

43. Հոգաբարձական խորհուրդն ամենայն տարի ըստ տնտեսականի և ուսումնականի մանրամասն հաշիւ է ներկայացնում Վեհափառ Կաթուղիկոսին առաջնորդի միջոցով, հոգաբարձական խորհրդի բոլոր անդամների ստորագրութեամբ։

44. Հոգաբարձուների բացակայութիւնը խորհրդի նիստերից պէտք է յիշատակուի դպրանոցի տարեկան տեղեկագրի մէջ։

45. Կանոնադրութեամբ չնախատեսուած որևէ խնդիր վճռելիս, եթէ տարաձայնութիւն է ծագում մանկավարժական ժողովի և վերատեսչի կամ վերատեսչի և հոգաբարձութեան մէջ, խնդիրը ներկայացւում է Վեհափառ Կաթուղիկոսին ի տնօրէնութիւն։

Գ. ԳԼՈՒԽ

ՎԵՐԱՏԵՍՈՒՉ.

46. Դպրանոցի ուսումնական մասը վարում են վերատեսուչը, տեսուչը և մանկավարժական ժողովը։

47. Վերատեսչի պաշտօնի համար ընտրւում է բարձրագոյն կրթութեամբ մի անձն Ռուսաստանի կամ արտասահմանի համալսարանաւորտ։

48. Նորընտիր վերատեսուչը պէտք է ունենայ առնուազն երեք տարուայ մանկավարժական փորձառութիւն։

49. Վերատեսուչը կարող է ունենալ մինչև վեց դաս։

50. Վերատեսչի անմիջական իրաւասութեան ենթարկւում են՝ տեսուչը, ուսուցիչները, վերակացուները, գրադարանապետը և դպրոցական միւս բոլոր պաշտօնեաները։

51. Վերատեսուչը պէտք է հսկէ դպրոցական ամեն տեսակ բարեկարգութեան, աշակերտների բարոյական և ֆիզիքական դաստիարակութեան վրայ։ Նա պէտք է դպրանոցի համար սահմանուած կարգերը պահպանի, պէտք է պահանջի ուսուցիչներից, վերակացուներից և առհասարակ բոլոր ծառայողներից իրենց պարտականութիւնների անթերի կատարումը՝ համաձայն սոյն հրահանգի և հաստատուած ծրագրի։

52. Վերատեսուչը կարող է մինչև մի շաբաթով արձակուրդ տալ դպրանոցի ուսուցիչներին և այլ պաշտօնեաներին։

53. Վերատեսուչը հոգաբարձութեանը տալիս է կիսամեայ և միամեայ տեղեկագիր աշակերտների յառաջադիմութեան և վարքի մասին։

54. Վերատեսուչը արձակուրդ է ստանում հոգաբարձութիւնից, իսկ արտակարգ անյետաձգելի դէպքում հոգաբարձութեան նախագահից։

55. Վերատեսուչը նախագահում է մանկավարժական ժողովներին։

56. Վերատեսուչը պարտաւոր է լինել դպրանոցում դասերի սկզբից մինչև վերջը։

57. Վերատեսուչը պարտաւոր է մասնակցել նաև հոգաբարձական ժողովներին։

58. Վերատեսուչը պէտք է յաճախ այցելի ուսուցիչների դասերին և հարկաւոր դէպքում կարևոր դիտողութիւններ անի ուսուցիչներին առանձին կամ մանկավարժական ժողովում։

Ծանօթ. Միայն վերատեսուչը կարող է ուսուցիչների դասերին ներկայ լինելով դիտողութիւններ անել։

59. Դպրանոցի վերատեսուչն երբ պաշտօն է ստանձնում, ցուցակներով ստանում է դպրանոցի ինվենտարը և պաշտօնը թողնելիս նոյն կարգով յանձնում է հոգաբարձութեան։

Ծանօթ. Նոյն կերպ են վարւում և միւս բոլոր պաշտօնեաները։

60. Մանկավարժական ժողովների օրակարգը կազմում է վերատեսուչը, ի նկատի ունենալով նաև ուսուցիչների առաջարկութիւնները և յայտարարում է նիստից մի օր առաջ։

61. Վերատեսուչ չլինելու դէպքում հոգաբարձութիւնն ընտրում է վերատեսչի պաշտօնակատար մի տարով։

Դ. ԳԼՈՒԽ

ՏԵՍՈՒՉ.

62. Տեսուչն ընտրւում է հոգաբարձութիւնից, վերատեսչի առաջարկութեամբ, որը նախապէս հարցնում է մանկավարժական ժողովի կարծիքն առաջարկելի թեկնածուի կամ թեկնածուների մասին (տես. յօդ. 28).

Ծանօթ. Տեսուչը պիտի լինի համալսարանաւարտ կամ ճեմարանաւարտ։

63. Տեսուչը վերատեսչի գործակիցն է դպրանոցի ներքին բարեկարգութեան բոլոր մասերում, մանաւանդ աշակերտների դաստիարակութեան գործում։

64. Տեսուչը կարող է շաբաթական մինչև 12 դաս ունենալ։

65. Տեսուչը պէտք է հսկէ աշակերտների կանոնաւոր դասերի յաճախման վրայ, իմանայ նրանց բացակայելու պատճառները, աչալուրջ հսկէ նրանց վարք ու բարքի, մաքրութեան և առողջութեան վրայ։

66. Տեսուչը պէտք է ուշադիր լինի, որ ճիշտ պահուի դպրանոցի ժամակարգը, որ ուսուցիչները ժամանակին գնան դասարան և պարապմունքները կանոնաւոր ընթանան։

67. Տեսուչը պէտք է հոգայ, որ դպրոցական իրերի պակասութիւն չլինի։

68. Տեսուչն իրաւունք ունի դպրանոցի պաշտօնեաներին յիշեցնելու իրենց պարտականութիւնները, երբ վերջիններս զանցառու կլինեն։

69. Տեսուչը բոլոր հնարաւոր միջոցները գործադրելուց յետոյ, անուղղայ կամ ծանր յանցանք գործած աշակերտների մասին տեղեկացնում է վերատեսչին։

1004 / 15470

70. Վերատեսչի ժամանակաւոր բացակայութեան դէպքում նրա պաշտօնը կատարում է տեսուչը. իսկ երբ վերատեսուչը բոլորովին թողնում է իւր պաշտօնը, տեսուչը կատարում է նոյն պաշտօնը՝ բոլոր իրաւունքներով և պարտականութիւններով, մինչև վերատեսչի կամ պաշտօնակատարի ընտրուելը և ստանում է վերատեսչական ռոճիկ։

71. Տեսչի բացակայութեան ժամանակ նրա պաշտօնը վարում է ուսուցիչներից մէկը՝ վերատեսչի առաջարկութեամբ և հոգաբարձութեան համաձայնութեամբ։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Ե. ԳԼՈՒԽ

ՎԵՐԱԿԱՑՈՒ.

72. Վերակացուների պարտականութիւնն է հսկել դպրանոցում աշակերտների կարգապահութեան և վարք ու բարքի վրայ՝ համաձայն վերատեսչից ստացած հրահանգների։

73. Նայած տեղական հանգամանքներին, վերակացուների թիւը որոշում է հոգաբարձութիւնը, լսելով նաև վերատեսչի պատճառաբանուած առաջարկը։

74. Վերակացուն պէտք է ունենայ առնուազն միջնակարգ կրթութիւն։

75. Վերակացուները կարող են ունենալ մինչև վեց դաս։

76. Դաս չունեցող վերակացուները մանկավարժական խորհրդին մասնակցում են խորհրդակցական ձայնով, իսկ աշակերտների վարք ու բարքի մասին՝ մասնակցում են ձայնի իրաւունքով։

Զ. ԳԼՈՒԽ

ԽԱՌՆ ԺՈՂՈՎ.

77. Խառն ժողովը կազմւում է Թեմական Առաջնորդի նախագահութեամբ և մասնակցութեամբ դըպրանոցի վերատեսչի, հոգաբարձական խորհրդի բոլոր

անդամների և մանկավարժական ժողովի 12 ներկայացուցիչների, որոնք ընտրւում են ուսումնական տարուայ սկզբին։

78. Խառն ժողովներ հրաւիրւում են հոգաբարձական և մանկավարժական խորհուրդների առաջարկութեամբ։

79. Խառն ժողովի իրաւասութեան են վերաբերում վերջնական վճիռ կայացնել մանկավարժական խորհրդի այն որոշումների վերաբերմամբ, որոնցով անուղղայ վարքի պատճառով արձակուելու են աշակերտներ։

Է. ԳԼՈՒԽ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ.

80. Թեմական դպրանոցներում ուսուցիչ լինել կարող են Ռուսաստանի և Արտասահմանի բարձրագոյն դպրոցներ և Գէորգեան Ճեմարանի լսարանական բաժին աւարտողները։

Ծանօթ. Ա. եթէ թեմական դպրանոցն ունենայ չորսամեայ եկ.-ծխական դպրոցի բաժանմունքներ, այդ բաժանմունքներում դաս աւանդել կարող են նաև միջնակարգ դպրոց աւարտածներ՝ հնգամեայ մանկավարժական փորձառութեամբ։

Բ. Ըստ հնարաւորութեան պէտք է դասերը բաժանել համաձայն մասնագիտութեան։

Գ. Այն անձինք, որոնք Ճեմարանի լսարանական բաժնի կամ բարձրագոյն դպրոցի ցենզ

չունեն, սակայն առնուազը տասը տարի թեմական դպրանոցներում եղել են ուսուցիչ, կարող են դասաւանդել թեմական դպրանոցներում։

Դ. Ձայնագրութեան, նկարչութեան, մարմնամարզութեան և ձեռարուեստի դասատուները պէտք է ունենան մասնագիտական դպրոցների վկայական։

Ե. Թեմական դպրանոցի չորսամեայ ծխական դպրոցի բաժանմունքներում կարող են դասաւանդել նաև վարժուհիներ։

81. Ուսուցիչը կարող է դասից բացակայել միմիայն յարգելի պատճառներով, որի մասին ժամանակին գրաւոր կերպով իմաց պիտի տայ դպրանոցի վարչութեան։

82. Ուսուցիչը պարտաւոր է դասաւանդել ըստ հաստատուած ծրագրի։ Եթէ նա որևէ պատճառով չէ կարող ծրագիրն անցնել ամբողջապէս, պարտաւոր է ժամանակին տեղեկացնել վերատեսչին։

83. Եթէ վերատեսուչը չէ գործադրում մանկավարժական ժողովի վճիռները կամ մանկավարժական ժողովի իրաւասութեան ենթարկուող հարցերն ըստ կանոնադրութեան, ուսուցիչները կարող են բողոքել հոգաբարձութեան։

84. Դպրանոցների ուսուցիչները տասը տարի նոյն դպրանոցում ծառայելուց յետոյ կարող են մի տարուայ արձակուրդ ստանալ առանց ռոճկի, բացակայութեան տարին ծառայութիւն հաշուելով և նպաստ ստանալով դպրանոցից ըստ հայեցողութեան հոգաբարձական խորհրդի։

85. Թեմական դպրանոցների բոլոր պաշտօնեաները հիւանդութեան դէպքում երկու ամիս ստանում են իրանց ռոճիկը լիովին, այնուհետև մինչև ուսման տարուայ վերջը ստանում են ռոճկի կէսը։ Հիւանդ պաշտօնեաներին փոխարինող պաշտօնակիցներն երկու ամիս ձրի են ծառայում, այնուհետև ստանում են ռոճիկ ըստ փոխադարձ համաձայնութեան վարչութեան հետ։

86. Ուսուցիչները ստանում են յաւելումներ՝ առաջին հնգամեակից յետոյ հինգ տարուայ միջին ռոճկի 5%-ը, իսկ երկրորդ հնգամեակից յետոյ 10% իւրաքանչիւր հնգամեակին, նոյն հաստատութեան մէջ ծառայելով։

87. Գրաւոր աշխատանքների համար ուսուցիչները ստանում են առանձին վարձատրութիւն ըստ քանակի և որակի։

Ծանօթ. Վարձատրւում են Հայոց լեզուի (գրաբար և աշխարհաբար), Ռուսաց լեզուի, գերմաներէնի, թուաբանութեան, հանրահաշուի և երկրաչափութեան գրաւորները։

Ը. ԳԼՈՒԽ

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ.

88. Մանկավարժական ժողովը կազմւում է վերատեսչի հրաւէրով և նախագահութեամբ, տեսչից և ուսուցիչներից։

Ծանօթ. Կարևոր դէպքում դպրանոցի բժիշկը հրաւիրւում է մանկավարժական խորհրդին ձայնի իրաւունքով։

89. Մանկավարժական խորհրդի նիստերը տեղի պիտի ունենան առնուազն երկու շաբաթը մի անգամ։

Ծանօթ. Ա. Կարևոր դէպքերում հրաւիրւում է արտակարգ ժողով։

Բ. Արտակարգ մանկավարժական ժողովները հրաւիրւում են վերատեսչի կամ ուսուցիչների մի երրորդ մասի ցանկութեամբ։

90. Ժողովը բացւում է, երբ ներկայ են մանկավարժական ժողովի անդամների $^1/_2$-ից աւելին։

91. Մանկավարժական ժողովին մասնակցել չկարողացող ուսուցիչներն ամեն անգամ նախապէս պարտաւոր են այդ մասին ծանուցանել նախագահին։ Բացակայել կարելի է հիւանդութեան կամ ուրիշ յարգելի պատճառներով։ Բացակայ անդամներն իրաւունք չունին պահանջել փոփոխելու մանկավարժական ժողովի արած որոշումները։

Ծանօթ. Մանկավարժական ժողովի անդամների բացակայութիւնը նիստերից պէտք է յիշատակուի տարեկան տեղեկագրի մէջ։

92. Մանկավարժական ժողովի զբաղմունքներն են.

Ա. Դասագրքերի ընտրութիւնը.

Բ. Ցանձնաժողովների ընտրութիւն մանկավարժական զանազան խնդիրներ քննութեան առնելու համար։

Գ. Ստուգումների ժամանակի և եղանակի որոշումը։

Դ. Աշակերտների ընդունելութիւնը, դասարանից դասարան փոխադրելը, վերաքննութիւն նշանակելը կամ միևնոյն դասարանում պահելը։

Ե. Աշակերտների յառաջադիմութեան ցուցակների քննութիւնը։

Զ. Երեկոյթներ, էքսկուրսիաներ, դպրոցական հանդէսներ կազմակերպելը։

Է. Մատենադարանի գրքերի, պարբերական հրատարակութիւնների և ուսումնական պիտոյքների ընտրութիւնը։

Ը. Աշակերտական ընթերցանութեան գրքերի ընտրութիւնն ըստ դասարանների։

Թ. Ընտրութիւն դասարանական դաստիարակների, որոնց պարտականութիւնը որոշւում է առանձին հրահանգով մանկավարժական խորհրդի կողմից։

Ժ. Ընտրութիւն մանկավարժական խորհրդի քարտուղարի։

93. Մանկավարժական ժողովները վճիռներ են անում նիստին ներկայ գտնուող անդամների ձայների կիսից աւելիով։ Ձայների հաւասար լինելու դէպքում գերակշռութիւն է տալիս Նախագահի ձայնը։

Ծանօթ. Անդամներից մէկի ցանկութեամբ քուէարկութիւնը պէտք է գաղտնի լինի։

Թ. ԳԼՈՒԽ

ԱՅԼ ՊԱՇՏՕՆԵԱՆՆԵՐ.

94. Դպրանոցի միւս պաշտօնեաներն են. բժիշկ,

մատենադարանապետ, վերատեսչի քարտուղար, որոնց հաստատում է հոգաբարձութիւնը՝ առաջարկութեամբ վերատեսչի, ապա գործավար, գանձապահ, հաշուապահ և տնտեսական կառավարիչ, որոնց ընտրում և հաստատում է հոգաբարձական խորհուրդը։

95. Մատենադարանապետի պարտաւորութիւններն են. բարեկարգ վիճակի մէջ պահել մատենադարանը, գրքերի և ուրիշ իրերի կանոնաւոր ցուցակներ պահել, Մանկավարժական Ժողովի կողմից մատենադարանի կառավարութեան և պահպանութեան համար մշակուած առանձին հրահանգի համաձայն գրքեր բաժանել ուսուցիչներին և աշակերտներին։

96. Մատենադարանապետն ամեն տարի հաշիւ է տալիս վերատեսչին։

97. Ֆիզիքական կաբինետի պահպանութիւնը և բարեկարգութիւնը յանձնւում է Ֆիզիկայի ուսուցչին։

98. Բժշկի պարտաւորութիւնն է՝ պայմանով որոշուած օրերին և ժամանակին գալ դպրանոց և հոգ տանել, որ դպրանոցում առողջապահական բոլոր պայմանները պահպանուած լինեն։

99. Վերատեսչի, տեսչի, դաստիարակի կամ վերակացուի հրաւերմամբ բժիշկը պարտաւոր է երթալ դպրանոց և անակնկալ հիւանդութեան դէպքում օգնութիւն հասցնել։

100. Համաձայն կապած պայմանի բժիշկը պարտաւոր է հիւանդ պաշտօնեաներին, աշակերտներին և ծառայողներին ձրի օգնութիւն հասցնել տներում։

101. Բժիշկն իւր պաշտօնին վերաբերող բոլոր դիտողութիւնները պարտաւոր է զեկուցանել վերատեսչին։

102. Գործավարը կազմում է Հոգաբարձական Խորհրդի արձանագրութիւնները և հսկում է Դպրանոցի դիւանական գործերի վրայ։ Վերատեսչի քարտուղարն ունի նոյն պարտաւորութիւնները վերատեսչի դիւանի վերաբերմամբ։

103. Գործավարը պարտաւոր է կատարել Հոգաբարձութեան ատենական գրութիւնները, պահել հաշուեմատեան և առհասարակ հոգաբարձութեան խորհրդարանի ամեն տեսակ գործերը։

Ծանօթ. Դպրանոցը կարող է յատուկ հաշուապահ ևս ունենալ։

104. Տնտեսական կառավարիչը կատարում է իւր պարտականութիւնները համաձայն Հոգաբարձութեան մշակած հրահանգի։

Ժ. ԳԼՈՒԽ

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ.

105. Թեմական Դպրանոց ընդունուել կարող են հայ մանուկներն ամեն դասակարգի և վիճակի, առանց հպատակութեան խտրութեան։

106. Աշակերտների ընդունելութիւնը լինում է դպրանոցական տարուայ սկզբին և յունվարին։

107. Ընդունելութեան խնդրագրերը տրւում են վերատեսչի անունով, մինչև օգոստոսի 20-ը և յունվարի 6-ը։ Խնդրագրի հետ ներկայացնում են ծննդեան, ծաղկի պատուաստման և ուսման վկայականները։

108. Առաջին դասարան մտնել ցանկացող աշակերտները պիտի լինեն ոչ աւելի քան 14 տարեկան առ 1-ն սեպտեմբերի։

109. Դպրանոցական ամբողջ դասընթացի ժամանակ ամեն մի աշակերտ կարող է նոյն դպրանոցում երկրորդ տարին մնալ ընդամենն երկու անգամ, այն էլ ոչ միմեանց յաջորդող դասարաններում։

Ծանօթ. Բացառիկ հանգամանքներում Մանկավարժական Ժողովի որոշմամբ թոյլ է տրւում դասարանում մնալ երրորդ տարին, նաև ամբողջ դասընթացքի ժամանակ երեք անգամ, նմանապէս միմեանց յաջորդող դասարաններում։

110. Նոր ընդունուող աշակերտները բժշկական մանրամասն քննութեան են ենթարկւում։

111. Բոլոր դպրանոցների աշակերտների հանդերձները պիտի լինեն միօրինակ։

112. Էքստերների քննութիւնը տեղի է ունենում միմիայն մայիսին։

113. Մի դասարանից հետևեալ դասարան փոխադրուելու համար երբ աշակերտն ունենայ մէկ կամ երկու առարկաներից թոյլ (2) թուանշան, նրան կարելի է տալ վերաքննութիւն, իսկ եթէ երեք և աւելի առարկաներից լինի թոյլ, պիտի մնայ նոյն դասարանում։

114. Դպրանոցից դուրս գնացած աշակերտները կարող են նորից ընդունուել Մանկավարժական Ժողովի որոշմամբ։

115. Առանց յարգելի պատճառի մի ամիս դպրոց չյաճախող աշակերտը համարւում է հեռացած։

116. Դպրանոցներից կիսատ դուրս եկած աշակերտներին տրւում է վկայագիր ուսման ու վարքի թուանշաններով։

117. Դպրանոցների գիշերօթիկ աշակերտները շաբաթ երեկոյեանները և տօն օրերը պատարագին ներկայ պիտի լինեն եկեղեցում, իսկ երթևեկները վարչութեան որոշած օրերին։

118. Դպրանոցները պէտք է ունենան քառաձայն երգեցիկ խումբ՝ պատարագին եկեղեցում երգելու համար։

119. Աշակերտները պիտի հաղորդուեն տարեկան մի անգամ։

120. Դասի սկզբին և վերջին աշակերտներն աղօթք են ասում։

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI-1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0228912

51. 630

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.